# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ
# ՈՐՈՇՈՒՄ

<< 12 >> 12 2012թ. N: 338-Ա ք.Գյումրի

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ <<ԳՅՈՒՄՐՈՒ ԾՆՆԴԱՏՈՒՆ>> ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՎԵՐՍՏՈՒԳՈՂ ՍԱՄՎԵԼ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻՆ ԶԲԱՂԵՑՐԱԾ ՊԱՇՏՈՆԻՑ ԱԶԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 113-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի, <<Բաժնետիրական ընկերությունների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 67-րդ հոդվածի 1-ին կետի <<ժ>> ենթակետի դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թվականի մայիսի 31-ի <<50 տոկոս և ավելի պետական մասնակցությամբ բաժնետիրական ընկերությունների վերստուգող հանձնաժողովների (վերստուգողների) լիազորությունները բաժնետոմսերի կառավարման լիազորություն ունեցող պետական կառավարման մարմինների ներքին աուդիտի ստորաբաժանումներին վերապահելու կամ այդ մարմինների որոշմամբ մասնավոր ընկերություններին պատվիրելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի նոյեմբերի 21-ի N 1923-Ն ու 2005 թվականի մայիսի 19-ի N 1187-Ն որոշումներն ուժը կորցրած ճանաչելու մասին >> N 732-Ն որոշման 3-րդ կետի 2-րդ ենթակետի դրույթները.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ ԵՄ

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի <<Գյումրու Ծննդատուն>> փակ բաժնետիրական ընկերության վերստուգող Սամվել Հարությունյանին 2013 թվականի հունվարի 8-ից ազատել զբաղեցրած պաշտոնից՝ հաստիքի կրճատման կապակցությամբ, միաժամանակ նրան ազատելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի <<Արթիկի մոր և մանկան առողջության պահպանման կենտրոն>> փակ բաժնետիրական ընկերության վերստուգողի պարտականությունների կատարումից:
2. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի <<Գյումրու Ծննդատուն>> փակ բաժնետիրական ընկերության գործադիր տնօրենի պաշտոնակատար Եղիշե Խաչատրյանին՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով կատարել վերջնահաշվարկ:

*Իսկականի հետ ճիշտ է*

**Ա.ԳԻԶԻՐՅԱՆ**